Ուրիշ ուղևորներ մզկիթը միայն տեսան։ Մարքիզ De Vogüé պարտաւորուեցաւ հեռու կենալ։ Max Van Berchem դրսի կողմէն կրցաւ տեսնել և լուսանկարել։ Clermont Ganneau երկրորդական ծանօթութիւններ միայն կրցաւ առնել։ Սակայն 1885ին Conder կարողացաւ Survey of Western Palestine աշխատասիրութեան մէջ Ռեմլէի մայր եկեղեցիին մասին հրատարակել երկու նկարագրութիւններ, յատակագիծ մը և ստուերագիրներ աւելի միջակ մանրամասնութիւնով։ 1922ին Camille Enlart կը յաջողի յատակագիծը հանել և լուսանկարել (Տե՛ս Les Monuments des Croisés dans le Royaume de Jérusalem, Հատ. Բ. 329–331)։

Քառասուն Վկաներու աշտարակ ըսուածը և Տաճարականաց հին վանքը Ռեմլէի արևմուտքը կը գտնուին։ Աշտարակը լաւ պահպանուած է և ճարտարապետական զեղեցիկ ոճ մը ունի հարիւր քսան աստիճաններով։ Անոր պատին վրայ զետեղուած արձանագրութիւն մը կ'ըսէ թէ՝ ան շինուած է 1318ին Ապուլ Ֆէտա-Մուհամմէտ սուլթանէն. այս արձանագրութիւնը վերջէն գրուած է, քանի մը նորոգութիւններու առթիւ։ Աշտարակին մէկ կողմը Տաճարականաց վանքին խիստ տարածուն աւերակները կան. հոն կ'երևնան եկեղեցիի մը հիմերը, և երեսուն աստիճաններէ իջնելով՝ երկու նաւով ստորերկրեայ եկեղեցի մը կը գտնենք։ Տաճարականները վանքին յարակից շէնքերը ընդարձակած և յատկացուցած են ի պաշտպանութիւն Երուսաղէմ գացող ուխտաւորներուն (Տե՛ս Mislin, Les Saints Lieux, Հատ. Բ. էջ 163)։ Բայց, ըստ արաբերէն արձանագրութեան, աշտարակին կամ մինարէին նորոգիչն է Քալաուն էս-Սալիհ սուլթանը, ոչ թէ Ապուլ Ֆէտա-Մուհամմէտ սուլթանը, ինչպէս կը գրէ Mislin։ Իսկ մզկիթին նորոգիչն է Սուլթան Պիպարս պինը Ապտիւլլահ Դասիմ, համաձայն նոյն մզկիթին արաբերէն արձանագրութեան։ Աշտարակը շինուած է, թերևս վանքն ալ, Խաչակրաց ժամանակ, և այս պարագան յայտնի կերպով կը հաստատուի վերջին տարիներս Երուսաղէմի մօտ Լեռնակողման լատին վանքին ժողովրդապետին կողմէն գտնուած և նոյն աշտարակին պատին շաղախին մէջ ագուցուած Խաչակրաց ժամանակի մէկ գրամովը։ Աշտարակին վրայ զետեղուած արաբերէն արձանագրութենէն կը հասկցուի թէ ան շինուած է 1318ին Քալաուն էս-Սալիհի կողմէն (Տե՛ս Guide-Indicateur, Ա. Մաս. էջ 144)։ Աշտարակին